

ԱՊՐԻԼ

1 - 7 Ապրիլ

Ապրիլին առաջին օրը կատակի համար սուտ խօսելու սովորութիւնը կամաց կամաց բնութիւն դարձաւ ամենուս քով, այնպէս որ այսօր քիչ մարդ կգտնուի, որ սուտ խօսելու համար ապրիլ 1 - ին սպասէ:

Ձգուշացէք խաբեբաներէն... շաղակրատ բժիշկներէն:

Քանի մը պգտիկ հրդեհներ կպատահին:

Կողոյ մը մէջ երկրաշարժի ցնցումներ կը զգացուին:

Մսավաճառութենէ սնանկացած մէկը քահանայ կձեռնադրուի:

8 - 14 Ապրիլ

Ախորժելի օդ:

Հետեւեալ հրաշքները տեղի կ'ունենան.

Մարդ չսնանկանար.

Մարդուն մէկը հայերէն լրագրի մը բաժանորդ կգրուի եւ բաժանորդագինը կանխիկ կը վճարէ:

Մէկն *բոնտլիտ*³ մեծ գումար մը կշահի.

Առանց *թունհիրի* կնիկ մը կտեսնուի հրապարակի վրայ.

Բանասէր մը լեզուաքննական յօդուած մը կհրատարակէ առանց հայհոյութեան:

Օդին գեղեցկութենէ խաբուելով հագուստնիդ մի պակասցնէք: Ապրիլ շողոքորթ ամիս մ'է:

15 - 21 Ապրիլ

Ամպամած եւ խոնաւ:

Կաթերը բոլորովին ջուր կկտրին:

1892 - ըդ տարեդարձ գինովութեան:

Զատկի առթիւ գինիի տակառներուն մէջ խեղդուողներ կգտնուին:

³ Տաճկական արժեթուղթ: